

ամէ, յառաջի միջըրեմ յիբրախոյ՝ Եման
ուղարք նավ ցածու պահանձը յարմաւր
ուղարք սովորութիւննեաւուն պահանձը նավ
ուղարք ու առաջէն վելույաց սերուա
յիբրախոյ առեկուատուքը Ս Ա Կ Ի Ք Ռ Բ Գ Բ Ի Ք Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Խ Ո Ր Ի Զ

Ս Ա Փ Ո Լ Ք

Ե

Լ Ո Կ Ս Ա Խ Ո Ր Ի Զ

ունկ համայնքուի նիմշը նոյն անդ քան

Արովինենի խոալսկան պատերազմին աս-
պարեզը հիմա Նափոլիի երկիրն է, կարծէ որ
մայրաքաղաքին վրայ համառօտ տեղեկութիւն
մը տամք, նորա երեւելի տեղերէն մէկուն
աեսարանազմաւն հանդերձ:

Նսկուի քաղաքը ոչ միայն ներոպայի, հա-
պա նաև բովանդակ աշխարհիս գեղեցկա-
գոյն քաղաքներէն մէկն է, թէ իւր կիմային
անուշութեամբը և թէ դիրքին զարմանալի
գեղեցկութեամբը։ Միջերկրական ծովուն մէկ
խորշին վրայ շինուած է Նափոլի, ու ծովուն
երեւէն յիսուն ձողաչափ բարձրանալով։ իւր
գեղադէմ պատկերը զրին հանգարտափայլ ե-
րեսը կցոլացըն։ Ապենեան լեռները մինչեւ
նորա ոտքն երկնցած՝ աջ ու ձախ կողմը եր-
կու սարաւանդակներ կլանզնեն, որոց խոժոռ
հայեցուածքը կարծես թէ իժպիս քաղցը կր-
փոխուի։ Նորա գեղածիծաղ վայելչութիւնը զի-
տելով։ Քաղաքին չորս կողմը զուարճալի գե-
ղեր, աշքը ուր որ դարձնես՝ դալարագեղ
բլուրներ կտևնես, զարմանազործ աւերակ-
ներ, պտղալի պարտէզներ, բարձրագազաթ
ծառեր, ոսկեփայլ նարնջենիներ, ու մէկ դիէն
ալ զոյնզոյն ծաղկանց անուշ անուշ բուր-
մունքները սիրոտ կըմայնցըն։ Խոկ երբ
դառնաս մէյմ’ալ երկնից կապոյտ երեսը նայիս,
ու մէկալ դիէն հրագազաթ Վեսուվ Երան
վսեմ զըսխը նայիս, որ բուգ ու ծուխ կինչէ
միակերպ, ահուղողի ու միսրանաց մէջ ըն-
կղմած, երբեմն սարսափելով՝ երբեմն զուար-
ճանալով՝ չես զիտեր ինչ անուն տաս այն-
պիսի սքանչելի դիրք ունեցող քաղաքի մը։

Ով որ Պոլսոյ աշխարհաքարող նեղուցը տե-
սեր է՝ նա միայն կարող է այսպիսի հիանալի
բնութեան գաղափարն ունենալ։

Գլուխութեան ու բախտաւ չ միարժ զուարչըն
գիտութեան գիր ուղարք զաւը ու վեհակ նախանձուց
ուղարք պատրաստութիւն գալու պատրաստութիւն ու վա-
ստանացած գալու գույքը ու ազգութեան պատրաստութիւնը գու-
յականը գույքը պատրաստութիւն անդունչ ու վահագույք գույքը պատրաստութիւնը

Բայց այսպիսի գեղեցիկ բնութեան նետ
մրցող ճարտարարուեստ չէնքեր չունենի Նափո-
լի։ Նորա եկեղեցիներուն վրայ՝ Վենետիկը,
Հռովմայ, Ֆիորենցայի եկեղեցիներուն վսեմու-
թիւնը չես գտներ, եւ ոչ խոկ թագաւորաց կամ
իշխանաց պալատներուն վրան ու մէջը՝ Խոա-
խոյ միւս համբաւաւոր քաղաքաց ճնշութիւնն
ու ճարտարապետական փառաւորութիւնը։

Այսու ամենայնիւ կան բաւական նշա-
նաւոր շէնքեր, պալատներ ու հարիւր քսան-
ուերկու մեծ եկեղեցիք, որոց մէջ գեղեցկա-
գոյն է Յիսուսի եկեղեցին. անուանի են նաև
մայր եկեղեցին Ս. Գեննարիոսի, եւ Վելարատ-
րաց եկեղեցին։ որուն տակը հին քրիստոնէից
շինած գետնաղամբանները կան։ Այն բազմա-
թիւ եկեղեցիներէն զատ՝ նաև հարիւր յիսուն
վանք կայ այլեւայլ կարգի կրօնաւորաց եւ
կուսանաց։

Քաղցը է Հայու մը համար զիտնալը որ այն
եկեղեցեաց փառաւորներէն մէկն ալ նուի-
րեալ է յանուն աստուածայնոյն Գրիգորի Հայոց
մէծաց եպիսկոպոսապետի։ Այն հոյակապ եկե-
ղեցւոյն մէջ՝ Ս.ստուծոյ մասնաւոր տնտեսու-
թեամբը՝ հազար տարիէ իվեր կիանզչի չար-
շարագգեաց մեծ Վկայն Քրիստոսի, իւր կա-
պանաց շղթային նետ մէկտեղ։

Եկեղեցւոյն հին յիշատակարանին մէջ կը-
պատմուի թէ Պատկերամարտից հանած հա-
լածման ժամանակն իւկ-Պօլիս, կուսանք ումանք
կելլեն իրենց հայրենիքնեն ու կնաւեն կուզան
ինափոլի, հետերնին բերելով իրենց եկեղե-
ցւոյն սրբազն զանձերը, որոց մէջ էին
նաև մեր սուրբ հօրը աստուածարեալ Գլուխ
ու շղթաները։ Հոն իրենց մահուը Եկե ետեւ՝
այն անզին զանձը կանցնի իձեւս այլոց կու-
սանաց, որ եւ փառաւոր եկեղեցի մը կը-



Հայութի քու ՓՈՉԻ Կաֆոնք ԿԱՌԱՅԻ մուտք.

անսկան, շին Բեյզարաց Ծմթշըրապ Խոր-
դը Խարճու հմայքանձ գառառափ Օվ-Օվ փ-
Խամբատիւր գառառառալ միասուն-
ամ, ունիսայն դժուարան գործուն

կանգնեն իտրոց հաւատացելոց, ճակատուն վրայ ալ լստիներէն այս արձանազրութիւնը փորազրելով, որ մինչեւ հիմա կեցած է.

DEO OPT. MAX.

DIVO GREGORIO ARMENIAE MAJORIS ARCHIEPS.

ΤΕΝΡԼՈՒ ԴԻՍԱՏՈՒ.

որոյ թարգմանութիւնը այս է.

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾԻ ԵՒ ԲԱՐԵԲՈՒՄԻ
ԱՍՏՈՒԱՆԱՑՆՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՅ ՄԵԽԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՏԱԶԱՐ ՆՈՒԻՐԱԿԱՆ:

Եկեղեցւոյն մէջ մատուռ մ'ալ կայ նուիրեալ Ս. Գրիգորի, որոյ սեղանոյն վրայ նկարեալ է նա պար առեալ ինքշտակաց: Մատրան պատերուն վրան ալ նկարեալ են մէկ կողմը Խոր վիրապէն ելելը, միւս կողմն ալ երկնապանձ քարոզութեամբ զՀայս դարձնելը իկրօնս աստուածպաշտութեան: Հոն կըտեսնուի նաեւ խոզակերպն Տրդատ ահաբեկ եւ խոնարհեալ, եւ քոյրը Խոսրովիդուխտ՝ եղբօրն համար աղաջաւոր առ Շառայն Աստուծոյ: Սեղանոյն տակը կպահուին Սրբոյն երկու սրունգները արծաթով ու բենեզով պատած: Սեղանոյն տաղաւարին մէջն ալ փառաւոր տուփի մը մէջ կպահուի Սուրբ Վկային ոտնակապ երկաթի շղթայն, որոյ հնութիւնն ու արեւելեան ձեւը՝ յայտնի կերեւին: Խոկ պատուականազոյն Եշխարը՝ այսինքն սրբազն Գլուխը՝ կպահուի միշտ կուսաստանին Եերքին գանձատունը՝ արծաթէ ոսկեզօծ զգրոցի մը մէջ, որոյ վրայ կայ այս արձանազիրը.

DIVI GREGOR. ARMENIOR. MARTYR. CAPUT.

որ թարգմանի,

ԱՍՏՈՒԱՆԱՑՆՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ. ՆԱՀԱՏ. ԳԼՈՒԽ.

Նափոլիի ժողովուրդը՝ Ս. Գլուխարիոսի հետ իւր պաշտպան կճանչնայ նաեւ մեր Ս. Լուսաւորիչը, որոյ եւ արծաթի կիսարձանը թափորվ կբալցընեն քաղաքին մէջ, սեպտեմբերի 30-ին փառաւոր հանդիսիւ տօնելով ըզնահատակն Հայաստանեայց, յուրախութիւն մեր եւ իյորդոր հայրասէր նախանձու, տեսնելով օտարաց ցուցուցած սէրն ու ջերմեռան-

դութիւնը առ Հայրն մեր եւ Պահապան ողց եւ մարմնոց: Այս վախճանաւ է որ մեք ալ այս առանձին տեղեկութիւնն հոս տուինք մեր համազգի եղբարց:

Եկեղեցիներէ զատ՝ Նափոլիի զարդ են բազմաթիւ ճեմարաններն ու դպրոցները, դիտանոցները, թանգարանները, մատենադարանները, անկելանոցները, հիւանդանոցները, եւ այլն: Միայն 50 հիւանդաց ու անկարող մարդկան համար մեծաշէն տներ կան. 400 պանդոկ, 700 զբուանոց, 20-ի չափ թատրոն, որոց մէջ ամենէն անուանին է Սամ Քայրո, որ Խոտալիոյ մեծազոյն ու գեղեցկազոյն թատրոնը կհամարուի: Համալսարանն ալ շատ հին է, 1224-ին հիմնուած: Բաց յայլոց թանգարանաց՝ կայ նաեւ Հերքուլանոն ու Պոմպէի քաղաքաց մէջէն ելած հնութիւնները պահելոյ համար մասնաւոր թանգարան: Կարիպալտի՝ Նափոլիի տիրելուն պէս բոլոր այն թանգարանաց վերատեսուչ դրաւ Աղեքսանդր Տիւմա գաղղացի անուանի վիպասանը, որ իւր քարեկամն ու կենսագիրն է, տալով նմա թագաւորական պալատներէն մէկն իբնակութիւն, ու առատ ռոճիկ:

Նափոլիի ամրութեանը կողմանէ ալ բաւական անուն ունի: Հինգ ամրոց կայ որ քաղաքը կպաշտպանեն, եւ նաւահանգիստը լաւ ամբացուցած է: Եւ սակայն հազիւ երկու ամիս կայ՝ տեսանք որ Կարիպալտին Նափոլիի մատենալուն պէս՝ Թրանչիսկոս Բ թագաւորը թողուց մայրաքաղաքը քաշուեցաւ իկայէթա, խոճալով իւր թագաւորական քաղաքին՝ որ զո՞ն չինի պատերազմին՝ չարաղէտ բախտին զոր յայտնի կզուշակէր՝ իւր տկարութիւնը ազատական զօրավարին քաջութեանը հետ չափելով:

Մեր դրած պատկերն է Նափոլիի քով Փողիշիինոյ ըսուած անուանի քարայրին բերանը, որ մէկ ծայրէն մինչեւ իմիւսը 2,000 ոտք երկայնութեամբ, 30 ոտք լայնութեամբ ու 50 ոտք քարձութեամբ ստորերկրեայ նամբայ մի է: